**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1**
**№ ԳՀԾՁԲ-21-20/2-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

ք. Երևան 23-ը ապրիլի 2021թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Ս. Սահակյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Պատվիրատու, մի կողմից և Ա/Ձ Արայիկ Մեսրոպյանը, այսուհետև՝ Կատարող, մյուս կողմից, հիմք ընդունելով 15.02.2021թ. կնքված № ԳՀԾՁԲ-21-20/2-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.13 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. **Համաձայնագրի առարկան**

1.1 Սույն Համաձայնագրով Կատարողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով Պատվիրատուին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետև՝ Ստացող) մատուցել Պայմանագրի N 1 Հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ծառայություն (այսուհետև՝ Ծառայություն), իսկ Պատվիրատուն (Ստացողը) պարտավորվում է ընդունել այդ Ծառայությունը և վճարել դրա համար:

2. **Համաձայնագրի գինը և վճարման կարգը**

2.1 Կատարողի կողմից մատուցվելիք Ծառայության առավելագույն գինը /գումարը/ ներկայացված է Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող Հավելված N 1-ում: Համաձայնագրի առավելագույն գինը կազմում է **40 000 000 (քառասուն միլիոն) ՀՀ դրամ**, որը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Պատվիրատուն մատուցված Ծառայության դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 4.2 կետին համապատասխան, եռամսյակներում առկա միջոցների հաշվին, բայց ոչ ուշ, քան 10.12.2021թ. (Հավելված N 2):

3. **Այլ պայմաններ**

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ծառայության մատուցման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 2 թերթից, հայերեն լեզվով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն Համաձայնագրի № 1,2 Հավելվածները բաղկացած են 1 թերթից և հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ ինժեներական զորքերի վարչությունը:

4. **Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:**

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան Բագրևանդի 5
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 02522157
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

**ԿԱՏԱՐՈՂ**

Ա/Ձ Արայիկ Մեսրոպյան
ՀՀ, ք. Եղվարդ, Երևանյան փ., 6/22
«Կոնվերս բանկ» ՓԲԸ,
Հ/Հ 193001312308000
ՀՎՀՀ 43130496

Ա. ՄԵՍՐՈՊՅԱՆ

Հավելված N 1
№ ԳՀԾՁԲ-21-20/2-1 գնման պայմանագրի
N 1 համաձայնագրի

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/հ | Ծառայությունների անվանումը | Չ/մ | Քանակը | Առավելագույն գինը /գումարը/ (ՀՀ դրամ) | Ծառայությունների մատուցումը ըստ եռամսյակների |
|---|---|---|---|---|---|
| | | | | | 2-ից 4-րդ եռամսյակներ, բայց ոչ ուշ քան 01.12.2021թ. |
| 1 | **Ոչ էլեկտրական մեքենաների վերանորոգման և պահպանման ծառայություններ** //Բարձր արտադրողականության ճանապարհաշինական տեխնիկայի վերանորոգում /Կամացու Դ-355 և Շանտու ՍԴ-42 տեխնիկայի վերանորոգման ծառայություններ// | դրամ | 1 | 40000000 | Ըստ հայտերի |

**Ծանոթություն՝** բացվածքը ներառված է **պայմանագրի հավելված 1-ում:**

Հավելված N 2
№ ԳՀԾՁԲ-21-20/2-1 գնման պայմանագրի
N 1 համաձայնագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Հ/հ | Ծառայությունների անվանումը | CPV կոդը | Նախատեսվում է ֆինանսավորել 2021թ. ըստ եռամսյակների, բայց ոչ ուշ, քան 10.12.2021թ., ընդ որում | | |
|---|---|---|---|---|---|
| | | | 2-րդ եռամսյակ | 3-րդ եռամսյակ | 4-րդ եռամսյակ |
| 1 | **Ոչ էլեկտրական մեքենաների վերանորոգման և պահպանման ծառայություններ** //Բարձր արտադրողականության ճանապարհաշինական տեխնիկայի վերանորոգում /Կամացու Դ-355 և Շանտու ՍԴ-42 տեխնիկայի վերանորոգման ծառայություններ// | 50531100/501 | 4823000 | 23610000 | 40000000 |

* *Վճարման ենթակա գումարը ներկայացված է աճողական կարգով:*

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ | Ա/Ձ Արայիկ Մեսրոպյան |
| | Ա. ՄԵՍՐՈՊՅԱՆ |